



ԳԱՆՏԱՅԱՅՈՑ ԹԵՄ DIOCÈSE ARMÉNIEN DU CANADA

# ԿԱՆՏԵՂ

ՍԲ. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԿՈՐԻՉ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ  
ՄԱՅՐ ԵԿԵՂԵՅԻՈՅ ԿԻՐԱԿՆՈՐԵԱՅ ԹԵՐԹԻԿ



**GANTEGH**

BULLETIN DU DIMANCHE DE LA CATHÉDRALE  
ARMÉNIENNE ST. GRÉGOIRE L'ILLUMINATEUR DE MONTREAL

ՄԱՅՐ ՏԱՃԱՐ

ԿԻՐԱԿԻ, 9 ՓԵՏՐՈՒՄ 2020

149

DIMANCHE, 9 Février 2020



«Միտր ոսկե է ակնաւոր»

Մտրք Մարգիտ

Կրտստիստի Տուն

Երկրասարգների օրհնության օր

ՓԵՏՐՈՒՄ



8

615 Stuart Avenue, Outremont Quebec, Canada H2V 3H2  
Website: [www.saintgregory.ca](http://www.saintgregory.ca) / E.mail: [saintgregorychurch@gmail.com](mailto:saintgregorychurch@gmail.com)  
Facebook: Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal

Դ. Կիրակի զկկի Ծննդեան  
4<sup>ème</sup> *Dimanche après Noël*

## Աստուածաշունչի Ընթերցումներ

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԿՈՂՄԷ ՏԵՄՈՌԷՆՈՍԻ  
ԳՐՈՒԱԾ ԱՌԱՋԻՆ 2-ԲԴ ՆԱՄԱԿԷՆ (3:1-12)

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ  
ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆԷՍԻ (6.22-32)

**Les lectures de la Bible d'aujourd'hui**

2 TIMOTHÉE 3.1-12

JEAN 6.22-32

Պատարագիչ եւ քարոզիչ՝  
ԱՐԺ. Տ. ԳԷՈՐԳ ՔԶՆՅ. ԱԲԵԱՆ  
Հոգեւոր Հովիւի Օգնական

Célébrant:

RÉV. PÈRE GEVORG APYAN

Prêtre Assistant

Առաւօտեան Ժամերգութիւն ժամը-	9:30-ին
Office Matines à	9h30
Ս. Պատարագ ժամը-	10:30-ին
La Sainte Messe à	10h30
Հոգեհանգիստ ժամը-	12:30-ին
Requiem à	12h30

DIACRES – ACOLYTES

*Chef de chœur: M. Sarkis Barsemian*

*Organiste: Mme Houry Bedrossian*

# ԿԻՐԱԿՆՆՈՐԵԱՅ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ

LES LECTURES  
DE DIMANCHE



THE SUNDAY  
READINGS

## ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԿՈՂՄԷ

### ՏԻՄՈԹԷՈՍԻՆ ԳՐՈՒՄՍ 2-ԴՆ ԱՄՍԱԿԷՆ (3:1-12)

1Գիտցի՛ր թե վերջին օրերը դաժան ժամանակներ պիտի գան. 2որովհետև մարդիկ պիտի ըլլան անձնասեր, արծաթասեր, պռոշտախօս, ամբարտաւան, հայիոյիչ, ծնողներու անհնազանդ, ապերախտ, անսուրբ, Յանգութ, անհաշտ, չարախօս, անժուժկալ, դաժանաբարոյ, բարին չսիրող, 4մատնիչ, յանդուզն, հպարտ, անելի հաճոյասեր քան աստուածասեր: 5Անոնք ունին բարեպաշտութեան դրսերեւոյթը, բայց ուրացած են անոր զօրութիւնը: Դուն հեռացի՛ր անոնցմէ. 6որովհետև ասոնցմէ՛ են անոնք՝ որ կը մտնեն տուներէն ներս, եւ կը գերեվարեն մեղքով բեռնաւորուած տկարամիտ կիները՝ զանազան ցանկութիւններէ դրդուած, 7որոնք միշտ կը սորվին բայց բնաւ չեն կրնար հասնիլ ճշմարտութեան գիտակցութեան: 8Յապա, ինչպէս Յանես ու Յամբես ընդդիմացան Սովսեսի, նոյնպէս ասոնք ալ կ'ընդդիմանան ճշմարտութեան: Միտքով ապականած մարդիկ, որ խոտելի են հաւատքի մէջ. 9բայց անելի պիտի չառաջդիմեն, որովհետև իրենց անմտութիւնը բացայայտ պիտի ըլլայ բոլորին, ինչպէս եղաւ անոնց երկուքիւնը:

10Իսկ դուն հետեւեցար իմ վարդապետութեանս, ապրելակերպիս, առաջադրութեանս, հաւատքիս, համբերատարութեանս, սիրոյս, համբերութեանս, 11հալածանքներուս եւ չարչարանքներուս, որոնք պատահեցան ինծի Աստիոքի, Իկոնիոնի ու Լիւստրայի մէջ: Ի՛նչ հալածանքներ կրեցի. բայց Տէրը ազատեց զիս բոլորէն: 12Եւ բոլոր անոնք՝ որ կ'ուզեն բարեպաշտութեամբ ապրիլ Քրիստոս Յիսուսով, պիտի հալածուին:

### ԱԹԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՅՈՎՉԱՆՆԷՄԻ (6:22-32)

22Յետեւեալ օրը՝ բազմութիւնը, որ ծովուն միւս եզերքն էր, տեսաւ թէ ուրիշ նաւակ չկար այն մէկէն գատ՝ որուն մէջ անոր աշակերտները մտած էին, եւ թէ Յիսուս իր աշակերտներուն հետ մտած չէր նաւակը, այլ անոր աշակերտները առանձին գացեր էին 23(բայց Տիբերիայէն ուրիշ նաւակներ եկան այն տեղին մօտ, ուր կերեր էին հացը՝ Տէրոջ շնորհակալ ըլլալէն ետք): 24Ուրեմն բազմութիւնը՝ տեսնելով թէ ո՛չ Յիսուս հոն է, ո՛չ ալ անոր աշակերտները, իրենք ալ նաւ մտան եւ գացին Կափառնայում փնտռելու Յիսուսը: 25Երբ գտան զինք՝ ծովուն միւս եզերքը, ըսին իրեն. «Ուաբբի՛, ե՛րբ եկար հոս»:

26Յիսուս պատասխանեց անոնց. «Ճշմարտապէս, ճշմարտապէս կը յայտարարեմ ձեզի. “Դուք զիս կը փնտռէք՝ ո՛չ թէ քանի որ նշաններ

տեսաք, հապա՝ որովհետև նկանակներէն կերաք ու կշտացաք՝: 27Գացէ՛ք, գործեցէ՛ք ո՛չ թէ կորստական կերակուրին համար, հապա այն կերակուրին համար՝ որ կը մսայ յաւիտենական կեանքին մեջ, եւ մարդու Որդի՛ն պիտի տայ ձեզի, որովհետև Հայրը՝ Աստուած զի՛նք կնքեց»: 28Ուրեմն ըսին իրեն. «Ի՛նչ ընենք՝ որպէսզի կատարենք Աստուծոյ գործերը»: 29Յիսուս պատասխանեց անոնց. «Սա՛ է Աստուծոյ գործը, որ հաւատաք անոր դրկածիս»: 30Ուստի ըսին իրեն. «Բայց դուն ի՛նչ նշան կ'ընես, որ տեսնեք ու հաւատանք քեզի. ի՛նչ կը գործես: 31Մեր հայրերը անապատին մեջ մանանան կերան, ինչպէս գրուած է. “Երկինքէն հաց տուաւ անոնց՝ որպէսզի ուտեն”»: 32Իսկ Յիսուս ըսաւ անոնց. «Ճշմարտապէս, ճշմարտապէս կը յայտարարեմ ձեզի. “Մովսէս չտուաւ ձեզի երկնային հացը, բայց իմ Հայրս կու տայ ձեզի ճշմարիտ երկնային հացը”.

### 2 Timothée 3.1-12

1Or sache ceci, qu'aux derniers jours il surviendra des temps fâcheux. 2Car les hommes seront idolâtres d'eux-mêmes, avares, vains, orgueilleux, blasphémateurs, désobéissants à leurs pères et à leurs mères, ingrats, profanes; 3Sans affection naturelle, sans fidélité, calomniateurs, incontinentes, cruels, haïssant les gens de bien; 4Traîtres, téméraires, enflés [d'orgueil], amateurs des voluptés, plutôt que de Dieu. 5Ayant l'apparence de la piété, mais en ayant renié la force : éloigne-toi donc de telles gens. 6Or d'entre ceux-ci sont ceux qui se glissent dans les maisons, et qui tiennent captives les femmes chargées de péchés, et agitées de diverses convoitises; 7Qui apprennent toujours, mais qui ne peuvent jamais parvenir à la pleine connaissance de la vérité. 8Et comme Jannès et Jambres ont résisté à Moïse, ceux-ci de même résistent à la vérité; [étant des] gens qui ont l'esprit corrompu, et qui sont réprouvés quant à la foi. 9Mais ils n'avanceront pas plus avant : car leur folie sera manifestée à tous, comme le fut celle de ceux-là. 10Mais pour toi, tu as pleinement compris ma doctrine, ma conduite, mon intention, ma foi, ma douceur, ma charité, ma patience. 11Et tu [sais] les persécutions et les afflictions qui me sont arrivées à Antioche, à Iconie, et à Lystre, quelles persécutions, [dis-je], j'ai soutenues, et [comment] le Seigneur m'a délivré de toutes. 12Or tous ceux aussi qui veulent vivre selon la piété en Jésus-Christ, souffriront persécution.

### Jean 6.22-32

22Le lendemain les troupes qui étaient demeurées de l'autre côté de la mer, voyant qu'il n'y avait point-là d'autre nacelle que celle-là seule dans laquelle ses Disciples étaient entrés, et que Jésus n'était point entré avec ses Disciples dans la nacelle, mais que ses Disciples s'en étaient allés seuls; 23Et d'autres nacelles étant venues de Tibériade près du lieu où ils avaient mangé le pain, après que le Seigneur eut rendu grâces; 24Ces troupes donc qui voyaient que

Jésus n'était point-là, ni ses Disciples, montèrent aussi dans ces nacelles, et vinrent à Capernaüm, cherchant Jésus. 25Et l'ayant trouvé au-delà de la mer, ils lui dirent: Maître, quand es-tu arrivé ici? 26Jésus leur répondit, et leur dit : en vérité, en vérité je vous dis : vous me cherchez, non parce que vous avez vu des miracles, mais parce que vous avez mangé des pains, et que vous avez été rassasiés. 27Travaillez, onpoint après la viande qui périt, mais après celle qui est permanente jusque dans la vie éternelle, laquelle le Fils de l'homme vous donnera; car le Père, [savoir] Dieu, l'a approuvé de son cachet. 28Ils lui dirent donc : que ferons-nous pour faire les œuvres de Dieu? 29Jésus répondit, et leur dit : c'est ici l'œuvre de Dieu, que vous croyiez en celui qu'il a envoyé. 30Alors ils lui dirent : quel miracle fais-tu donc, afin que nous le voyions, et que nous te croyions? quelle œuvre fais-tu? 31Nos pères ont mangé la manne au désert; selon ce qui est écrit : il leur a donné à manger le pain du ciel. 32Mais Jésus leur dit : en vérité, en vérité je vous dis : Moïse ne vous a pas donné le pain du ciel; mais mon Père vous donne le vrai pain du ciel;



## Հոգեւոր Հովիւի Պատգամը

**Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ, Ամէն .  
« Ես եմ մի վախճանք »**

Սիրելի հաւատացեալ քոյրեր եւ եղբայրներ,  
Մինչ ես կ'անցնիմ այս հրաշայի պատմութեան՝ նախ հարկ կը համարեմ յիշեցնել ձեզի, թէ ինչ որ Աստուած կ'ըսէ մեզի Սուրբ Գիրքին միջոցով՝ մեզի համար յստակ իմաստ ու նշանակութիւն ունի: Յիսուս Զրիստոսի կատարած հրաշքներն ալ մեզի համար իւրօրինակ բացայայտում կը հանդիսանան՝ ուղարկուած Աստուծոյ կողմէ: Իւրաքանչիւր գործողութեան ետեւ կանգնած է Անոր իմաստութիւնը, կամքն ու նպատակը:

Այսպէս, այն դրուագը, որուն մասին անետարանիչներէն երեքը՝ Մատթեոսը, Մարկոսը եւ Յովհաննէսը կը պատմեն Յիսուսի Գալիլիոյ ծովու ջուրերուն վրայէն քալելուն մասին: Սակայն չորս անետարանիչներն ալ կը պատմեն այս դէպքին նախորդող Յիսուսին մէկ այլ մեծագոյն հրաշքին մասին՝ ինչզ հազար ժողովուրդին ինչզ նկանակով եւ երկու ձուկով կերակրուելուն մասին: Յովհաննէս Անետարանիչը կը բացատրէ, թէ ինչո՛ւ անմիջապէս այդ դէպքէն

յետոյ Յիսուս առանձին ուղարկեց աշակերտները, իսկ ինք՝ առանձին լեռ բարձրացաւ. «Երբ Յիսուս իմացաւ, որ պիտի գան զինք տանելու եւ թագաւոր ընելու, դարձեալ առանձին դէպի լեռ գնաց» (Յովի. 6:15): Այսինքն այն դէպքին նման, երբ սատանան Յիսուսին փորձեց անապատին մէջ, ըսելով. թէ աշխարհի բոլոր տերութիւնները Անոր կու տայ, միայն թէ իրեն երկրպագե՛ք, այժմ ժողովուրդը՝ հիացած Յիսուսին գործած իրաջըով, կ'ուզէր անոր թագաւոր կարգել: Այդ պատճառով ալ Յիսուս ուղղակի հեռացաւ այդ ժողովուրդէն ու առանձին լեռ բարձրացաւ:

Այժմ պահ մը միտքով ետ երթանք դարերու խորքը եւ թոյլ տանք, որ այդ գիշերը, իր բոլոր մանրամասնութիւններով, հասնիլ մեր երեւակայութեան մէջ: Պատկերացուցէ՛ք, շուրջ բոլորը անթափանց, խաւար գիշեր է, փոթորիկ, հսկայական ալիքները սարսափազդու կերպով կը տարուբերեն նաւակը, որուն մէջ առաքեալներն են, եւ կը թուի, թէ վախճանը անխուսափելի է: Առաքեալները սարսափի մէջ են, անոնք իրենց լքուած կը զգան Տիրոջ կողմէ: Մի՞թէ այս նոյնը մեզի հետ չի կատարուիր, երբ մենք փորձութիւններու կամ նեղութեան մէջ կը յայտնուինք: Երբեմն մեզի կը թուի, թէ Աստուած լքած է մեզ, առանձին ձգած է մեր ցաւերուն հետ եւ այլեւս ոչ մէկ յոյս ու փրկութիւն չկայ մեզ պարուրուած խաւարէն: Բայց չէ՞ որ այդ ժամանակ Աստուծոյ Որդին կանգնած էր լեռան բարձունքին ու կ'աղօթէր: Կ'աղօթէր աշխարհին համար, անոնց համար, որոնք ներքեւն էին եւ կը պայքարէին ալիքներուն դէմ:

Այդպէս ալ հիմա, մեր ժամանակներուն մէջ, երբ մենք ոեւէ դժուարութեան կը հանդիպինք՝ պիտի յիշենք, որ Փրկիչ ունինք՝ մեր Տէր Յիսուս Քրիստոս, որ միշտ շատ մօտ է մեզի՝ բարձունքին մէջ կանգնած ու կը տեսնէ ամէն ինչ: Իսկ Անոր աշակերտները մոռցած էին այդ մասին եւ այդ պատճառով ալ սարսափի մէջ էին: Իսկ Տէրը ոչ միայն բարձունքին մէջ կանգնած կ'աղօթէր անոնց համար, այլեւ փոկթաց ներքեւ իջնելու ու վայրկեան մը առաջ օգնութեան հասնելու Իր սիրելի աշակերտներուն: Կը կարծեմ ամենարագ ճամբան անոնց հասնելու եւ օգնելու՝ ջուրերուն վրայէն երթալն էր, քանի որ քամին հանդիպակաց կողմէն կը փչէր եւ հաւանական է, որ այն ափը, ուր Յիսուս կը գտնուէր, նաւակ ալ չկար, որ անոր հետ հասնէր անոնց: Իսկ Ան շատ կը սիրէր Իր աշակերտները եւ կ'ուզէր օգնել անոնց, անոնց կողքին ըլլալ: Իսկ աշակերտները խաւարին մէջ հազիւ նշմարելով դէպի իրենց եկող մէկը, սարսափէն սկսան պոռայ, քանի որ կարծեցին, թէ մահուան ուրուականը իրենց կ'այցելէր: Եւ միեւնոյն ժամանակ լսեցին Անոր ձայնը, որ կ'ըսէր. «Սրտապնդ-ուեցէ՛ք, ես եմ, մի՛ վախնաք»:

Նոյնպէս ալ մեզի հետ կը պատահի, երբ կեանքը բոլորովին անտանելի կը դառնայ: Այդ ժամանակ մեր Փրկիչին ձայնը կ'ըսէ մեզի. «Ես հոս եմ, մի՛ վախնաք: Կեանքը, ծովը եւ ամէն ինչ ինձ կ'ենթարկուին, միայն թէ հաւատացէք եւ Ինծի յուսացէք»: Տէրը մեզ մօտ կու գայ: Ան ընդառաջ կու գայ մեզի, սակայն մենք չենք նկատեր: Կը մօտենայ, բայց դեռ չենք տեսներ, քանի որ մեր սիրտը կուրացած կ'ըլլայ վախէն:

Երբ մենք կը կանգնինք փրկութեան ճամբուն վրայ, ապա այդ նոյնն է, ինչպէս ծովի ջուրերուն վրայէն քալելը: Կարելորդ այն է, որ մենք ամբողջովին վստահինք Աստուծոյ՝ դէպի Անոր ընթանանք եւ ուշադրութիւն չդարձնենք մեր չորս կողմը ծփացող ալիքներուն, որպէսզի Պետրոսին նման չսկսինք սուզուիլ: Պիտի յիշենք, որ Աստուած մեր կողքին է, Անոր ամենագոր Աջը միշտ դէպի մեզ ուղղուած է, միայն թէ բռնենք եւ նոյնիսկ անհնարին թուող դժուարութիւնը՝ Անոր կամքով յաղթահարենք: Ինչպէս Պետրոսը պատրաստակամութիւն յայտնեց հետեւելու Տիրոջ օրինակին, այնպէս ալ մենք պիտի ընենք: Անոր կատարեալ կերպարը միշտ պիտի ունենանք մեր առջեւ ու հետեւինք Անոր: Երթանք առանց ոեւէ բանէ վախնալու, առանց ուշադրութիւն դարձնելու մեր

շուրջը փոթորկուող խնդիրներուն: Երթանք ու պատրաստ ըլլանք շարունակելու մեր ընթացքը նոյնիսկ առանձին, քանի որ Պետրոսն ալ առանձին գնաց եւ միւս առաքելները սարսափէն քարացած՝ չհետեւեցան անոր: Յառաջ երթանք ու նայինք միմիայն Աստուծոյ ուղղութեամբ եւ երբեք չենք սուզուիր, բայց եթէ նոյնիսկ շեղուինք ճշմարիտ ճամբէն, դադրինք հաւատալ ու սկսինք խեղդուիլ, ապա նորէն օրինակ առնենք Պետրոսէն եւ մեր սիրտերու ամբողջ զօրութեամբ կանչենք Տիրոջը՝ ըսելով. «Տէր, փրկէ զիս, կը խեղդ-ուիմ»: Եւ այն ատեն, միանշանակ, մեր Բարեգութ Յայրը իր օգնութեան ձեռքը կը մեկնէ ու դուրս կը հանէ մեզի:

Այս դրուագին միջոցով Աստուած ցոյց կու տայ, թէ ինչ կը սպասէ իր գաւակներէն: Ան կ'ուզէ, որ մենք քալենք ջուրերու վրայէն ու ընենք այդ ամէն օր: Այսինքն, ամէն օր մենք կրնանք հանդիպիլ դժուար-ուփոխներու, որոնք կը ստիպեն մեզ խեղդուելու վախի, կասկածի ու անհաւատութեան մէջ: Եւ իւրաքանչիւր օր մենք կրնանք ապրիլ՝ հեմուելով Աստուծոյ զօրութեան վրայ:

Այս հրաշքով Յիսուս նաեւ ցոյց կու տայ իր աշակերտներուն եւ բոլորիս, որ իրական հաւատացեալին համար, որուն հայեացքը ուղղուած է առ Աստուած, անհնարին բան չկայ: Անոր մասին կը վկայէ նաեւ Յովհաննէսի ակետարանը «Ճշմարիտ, ճշմարիտ կ'ըսեմ՝ ձեզի, թէ ով կը հաւատայ ինձի, ինքն ալ կ'ընէ այն գործերը, որ ես կ'ընեմ. եւ անոնցմէ անելի մեծերը կ'ընէ, որովհետեւ ես կ'երթամ Զօրս մօտ» (Յովհ. 14:12):

Ան կ'ուզէ, որ բոլոր հաւատացեալ քրիստոնեաները իրենց կեանքով ցոյց տան Աստուծոյ սէրը, ուժն ու կարողութիւնը: Յիշէ՛նք, որ Աստուած լեցուն է սիրով ու կարեկցանքով: Եւ միշտ պատրաստ է օգնելու եւ աջակցելու մեզի, միայն թէ մենք դէպի Անոր ընթանանք: Ինչ որ ալ պատահի մեր ճամբուն վրայ, սորվինք հաւատալ ու ամբողջովին վստահիլ մեր Երկնաւոր Զօր եւ հետեւինք Անոր խօսքին:

Այս պատմութիւնը շատոնց եղած է: Երկու հազար տարի առաջ: Սակայն այդ բոլոր դարերու ընթացքին եւ մինչեւ հիմա ալ միլիոնաւոր մարդիկ կը շարունակեն «ընթանալ ջուրերու վրայէն»: Ամբողջ աշխարհին մէջ մարդիկ կը շարունակեն տեսել Անոր, Ով որ կը քալէ կեանքի ալիքներուն վրայէն եւ կու գայ դէպի մեզի, դէպի մեղաւորներուս, մոլորուածներուս ու տառապ-եալներուս եւ կ'ընէ. «Սրտապնդուեցէ՛ք, ես եմ, մի՛ վախնաք: Միշտ ձեր կողքին եմ: Միշտ պատրաստ եմ օգնելու ձեզի: Միայն թէ մի կասկածիք: Միայն թէ դէպի Ինձ դարձէք»: Եւ թող մեր Տէր Յիսուս Զրիստոս մեզի հետ ըլլայ այժմ, միշտ եւ յաւիտեանս, ամէն:

Օրինութեամբ՝

Տ. Դաւիթ քահանայ Մարգարեան

Հոգեւոր հովիւ

## **Résumé du Sermon**

### **"N'ayez pas peur"**

Ce sont les paroles d'encouragement de Jésus adressées aux disciples affolés lorsque, le voyant marcher sur les eaux, ils le prennent pour un fantôme.

Ce message de Jésus est le bras tendu de Dieu vers l'homme pour qu'il garde l'espoir : donc la foi.

La peur nous fait douter de l'intérêt que Dieu nous porte et nous perdons notre mémoire spirituelle.

N'oublions pas ce que Jésus a fait et combien il a été bon pour nous.

La foi n'élimine pas la peur mais l'amointrit et nous rapproche de Dieu.

En Foi et en Prière  
Père David Margaryan  
Prêtre paroissial



## ԿԱՐԵԻՈՐ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

Արդեօք Գիտէի՞ք թե՛.-

- **Կ'ուզէք ըսել, որ ուղղափառ հաւատքի խոստովանութիւնը անհրաժե՞շտ պայման է Ս. Հաղորդութիւն ստանալու համար:**

Այո՛: Այս է պատճառը, որ Ս. Հաղորդութիւնը բաշխելէն առաջ պատարագիչ եկեղեցականը բարձրաձայն կ'ըսէ հաւատքի համառօտ խոստովանութիւն մը.

«Ըսէ՛ք մեղանչեցի Աստուծոյ դէմ: Կը հաւատանք Ս. Հօրը՝ իբրեւ ճշմարիտ Աստուած, կը հաւատանք Ս. Որդիին՝ իբրեւ ճշմարիտ Աստուած, կը հաւատանք նաեւ Ս. Հոգիին՝ իբրեւ ճշմարիտ Աստուած: Որովհետեւ այս է մեր Տէրը եւ Փրկիչը Յիսուս Քրիստոսի կենդանի եւ կենդանարար Մարմինը եւ Արիւնը, որ մեր մեղքերու քաւութեան եւ թողութեան համար է: Կը խոստովանինք եւ կը հաւատանք»:

- **Ի՞նչ կ'ըսէ Ս. Յովհան Մանդակունին (478-490) սրբագործուած հացի եւ գինիի՝ Տիրոջ իրական Մարմինը եւ Արիւնը ըլլալու մասին:**

Երանելի Հայրապետը իր ճառերէն մէկուն մէջ խնդրի մը վերաբերեալ յատուկ կերպով կը նշէ. «Եւ մենք ճշմարիտ հաւատքով կը հաւատանք, որ Քրիստոս՝ սն է Մեղանին վրայ. Անոր կը մօտենանք, Անոր կը տեսնենք, Անոր կը շօշափենք, Անոր կը համբուրենք, Անոր մեր ներքը կ'ընդունինք եւ կը դառնանք մարմին, անդամ եւ որդիներ Աստուծոյ: Արդ, ան, ով որ այսպիսի հաւատքով չի հաւատար եւ չըմբօնէր, որ Աստուծոյ որդիին մարմինն է ան, հեռու է Աստուծոյ օգնութենէն, հեռու է Ս. Հոգիի շնորհներէն, հեռու է մեղքերու թողութենէն եւ յաւիտենական կեանքէն, չակնկալէր յարութիւն եւ փրկութիւն յոյս չունի, զուրկ է քրիստոնէական հաւատքէն, որովհետեւ՝ Քրիստոսի արեան հեղումով, մեզի փրկութիւն եղաւ: Եւ արդ, ոչ ոք թող խղճմտանքով չմօտենայ Անոր, ոչ ոք թերահաւատութեամբ չմօտենայ Անոր, ոչ ոք թող անտարբերութեամբ չմօտենայ Անոր, այլ՝ ճշմարտապէս թող հաւատայ, որ մենք ու անեղ խորհուրդի ժամանակ եկեղեցին երկինք կը դառնայ, Խորհուրդի սեղանը փառքի աթոռ, որուն վրայ կ'իջնէ եւ կը բազմի Քրիստոս, ով միշտ կը բաշխուի բոլորին փրկութեան համար»:



### Յիշատակութեան Օրեր

Շաբաթ, 8 Փետրուար 2020

**Երիտասարդներու բարեխօս Սուրբ Սարգիս զօրավարի յիշատակութեան օր**

Ամենայն Հայոց Գարեգին Բ հայրապետի տնօրինութեամբ Ս. Սարգիս զօրավարի տօնը հռչակուած է Երիտասարդներու Օրինութեան Օր: Ս. Սարգիս զօրավարը ամենասիրուած սուրբերէն է: Իր որդւոյն՝ Մարտիրոսի եւ 14 քաջ մարտիկներու հետ ան նահատակուած է յանուն քրիստոնէական հաւատքի: Արիութեան համար Ս. Սարգիսը Մեծն



Ս. Սարգիս զօրավար  
Երիտասարդներու Օրինութեան  
Օր

Կոստանդիանոս կայսրի (285-337) կողմէ կը կարգուի իշխան եւ սպարապետ՝ Հայաստանին սահմանակից Կապադովկիայի մէջ: Ան ոչ միայն գերազանց սպարապետ էր, այլեւ հիանալի քարոզիչ: Օգտուելով կայսրի յօժարութենէ՝ իր իշխանութեան տակ գտնուող քաղաքներուն մէջ կը քանդէ հեթանոսական մեհեանները, կը կառուցէ եկեղեցիներ, կը տարածէ քրիստոնէութիւնը: Երբ Հուլիանոս Ուրացողի թագաւորութեան օրերուն (360-363) կը սկսին Զրիստոսի եկեղեցւոյ հալածանքները, Ս. Սարգիսը, աստուածային յայտնութեամբ հրաման կ'առնէ հեռանալ կայսրութեան սահմաններէն, իր որդւոյն Մարտիրոսի հետ կու գայ, եւ կ'ապաստանի քրիստոնէայ Հայաստանի մէջ, ուր կը թագաւորէր Տիրան արքան՝ Մեծն Տրդատի թոռը՝ Խոսրովի որդին: Տեղեկանալով, որ Հուլիանոսը մեծ զօրքով կը շարժուի Պարսկաստանի վրայ, Հայոց արքան, ձգտելով իր երկիրը զերծ պահել յարձակման վտանգէն, կը յորդորէ Սարգիսին ծառայութեան անցնիլ Շապուհի մօտ: Շապուհը սիրով կ'ընդունի Ս. Սարգիսին եւ կը նշանակէ անոր զօրագունդերու հրամանատար: Չօրականներէն շատերը, տեսնելով փայլուն զօրավարի բարեպաշտութիւնը եւ վարքով վկայած նուիրումը առ Աստուած, իր աղօթքներով Տիրոջ գործած հրաշքներուն, կը հրաժարէին հեթանոսութենէն եւ կը դառնային քրիստոնէայ: Սակայն Շապուհը կը պահանջէ անոնցմէ պաշտել կրակը եւ գոհ մատուցել: Չօրավարը անմիջապէս կը մերժէ՝ ըսելով. «Երկրպագելի է մէկ Աստուած՝ Ամենասուրբ Երրորդութիւնը, ով ստեղծած է երկիւքն ու երկիրը: Իսկ կրակը կամ կուռքերը ի բնէ աստուածներ չեն, հողեղէն մարդը անոնք կրնան փճացնել»: Այդ խօսքերէն յետոյ Ս. Սարգիսը կը կործանէ բազիլը: Չայրացած ամբոխը կը յարձակի Ս. Սարգիսին եւ անոր որդւոյն վրայ: Առաջին նահատակութեան պսակը կ'ընդունի անոր որդին՝ Ս. Մարտիրոսը: Ս. Սարգիսը կը բանտարկուի եւ աներբէր մնալով իր հաւատքին մէջ՝ կը գլխատուի: Նահատակութենէն յետոյ Ս. Սարգիսի մարմնին վրայ լոյս կը ծագի: Զրիստոնէական հաւատքին համար կը նահատակուին նաեւ՝ Ս. Սարգիսին հաւատարիմ տասնչորս զինուորները: Հաւատացեալները նահատակներու մարմինները կ'ամփոփեն Համիան քաղաքին մէջ:

Ս. Սարգիսը Հայ ժողովուրդի ամենասիրած սուրբերէն է, եւ պատահական չէ, որ Ս. Մեսրոպ Մաշտոց վարդապետը անոր մատուցները կը բերէ Կարբի (Աշտարակի շրջան)՝ այդ տեղին մէջ կառուցելով երանելիին անունը կրող եկեղեցի:

Ս. Սարգիս Չօրավարին տօնը Հայաստանի մէջ ընդունուած է նշել ոչ միայն եկեղեցական ծեսով, աղօթքով, այլեւ ժողովրդական սովորոյթներով, որ մեր մէջ նուիրական աւանդութիւն է: Ս. Սարգիս զօրավարը երիտասարդներու արագահաս բարեխօսն է: Անոր միջնորդութեամբ հրաշքներ տեղի կ'ունենան: Այդ օրը երիտասարդները կը դիմեն սուրբին, որ իրենց աղօթքները հասցնէ առ Աստուած:

Ս. Սարգսի տոսին նախորդող գիշերը երիտասարդները աղի բլիթ կ'ուտեն, որուն հետ կը կապեն իրենց փեսացուի կամ հարսնուցուի երազայայտութիւնը: Այդ օրուայ յիշատակելի սովորութիւններէն է փոխինդով մատուցարանը դնել տան տանիքին կամ պատշգամբին եւ սպասել Ս. Սարգսի զօրավարին ձիու պայտի հետքին:

Ըստ ավանդոյթի՝ Ս. Սարգսիը պէտք է հրեշտակներու ուղեկցութեամբ անցնի, եւ մատուցարանին մէջ դրուած ալիւրին կամ փոխինդին մէջ ձգել մաքրութիւն, անաղարտութիւն խորհրդանշող իր սպիտակ ձիու պայտին հետքը, այդ տարի կ'իրականանայ տուեալ հաւատացեալի երազանքը: Երիտասարդները տոսին առիթով իրարու բացիկներ եւ անուշեղէն կը նուիրեն:

Տօսին օրը Ս. Սարգսի Չօրավարին անունը կրող եկեղեցիներուն մէջ կը մատուցուի Սուրբ Պատարագ, որմէ յետոյ կը կատարուի երիտասարդներու օրհնութեան կարգ:

### Այս տօսին հետ կապուած սովորոյթներ եւ ավանդոյթներ

Եկեղեցականի զուգընթաց, պահպանուած են այս տօսին հետ կապուած ժողովրդական սովորութիւններ: Այսպէս, առաջաւորաց պահքի օրերուն մարդիկ ոչ միայն արգելքներ կը դնէին իրենց սնունդին, այլ նաեւ աշխատանքի որոշ տեսակներուն եւ մարմնի խնամքին վրայ: Արգիլուած էր լուացք ընել, ճախարակ մանել, գործ ունենալ բուրդի, մագի հետ, որովհետեւ կը հաւատային, որ մագ լուալու պարագային Ս. Սարգսի ձիու ոտքերուն թնճուկ կը փաթթուի եւ որպէս պատիժ՝ իրենց մագերը կը թափին...:

Ս. Սարգսի տօսին կը նախորդէ Ս. Գրիգոր Լուսաւորիչին կողմէ հաստատուած առաջաւորաց պահքը: Պահքը կը տեւէ հինգ օր:

Ուրբաթ օրը մարդիկ կը սկսէին թաթախման՝ պահքը բանալու նախապատրաստական աշխատանքները: Մեղրաջուրով կամ շաքարաջուրով փոխինդ կը շաղէին, ընտանիքին անդամներուն թիւով գունդներու կը բաժնէին եւ երեկոյեան պահքը կը բանային այդ գունդերով:

Սակայն ծոմ պահած երիտասարդները չէին ուտեր. անոնք այդ երեկոյ աղի կրկնէի կ'ուտէին, որպէսզի տեսնեն, թէ երազին մէջ իրենց ո՞վ ջուր պիտի տայ: Աղի կրկնէի կերած աղջիկներն ու մանչերը կը պատմէին իրենց երազները, թէ ո՞վ իրենց ջուր տուաւ, ինչպիսի՞ գաւաթով, որքա՞ն ջուր կար գաւաթին մէջ եւ այլն... Ոսկեայ գաւաթը հարուստ ամուսին կը նշանակէր, փայտեայ գաւաթը՝ աղքատ, լեցուն գաւաթը երկար ամուսնական կեանք կը կանխագուշակէր, կիսով լեցունը՝ կարճ ամուսնական կեանք եւ այլն... Հայոց մէջ տարածուած սովորոյթ էր՝ Ս. Սարգսիին նուիրուած պահքի վերջին Շաբաթ օրուան գիշերը (Փետրուարին) բակերը, տանիքներն ու պատշգամները՝ ամաններու մէջ լեցունած ալիւր դնել, որուն վրայ Սուրբը իբր թէ կը դրոշմէր իր ձիուն ամբակի կամ պայտին հետքը (համարուած է բարիքի, երջանկութեան խորհրդանշան): Ըստ ավանդութեան, ան պէտք է հրեշտակներու ուղեկցութեամբ անցնէր, եւ որու որ ափսէին մէջ դրուած ալիւրի վրայ ձգէր իր սպիտակ ձիու պայտին հետքը (մաքրութեան եւ անաղարտութեան խորհրդանշիչ), այդ տարի կ'իրականանային երիտասարդին երազանքերը: Կար ուրիշ սովորութիւն մըն ալ. ծոմ պահողները իրենց փոխինդէն կտոր մը կը դնէին տան տանիքը եւ կը հետեւէին, թէ այդ կտորը կտցող թռչունները ո՞ր կողմ կը թռչին, այդ կողմէն ալ կը սպասէին իրենց ապագայ ամուսինը կամ կինը:

Տօսին առթիւ սիրահարուած երիտասարդները իրարու բացիկներ եւ քաղցրաւենիք կը նուիրեն: Տօսին օրը Ս. Սարգսի Չօրավարին անունը կրող

Եկեղեցիներուն մէջ Ս. Պատարագ կը մատուցուի, որմէ ետք կը կատարուի երիտասարդներու օրհնութեան կարգ:

Մայր աթոռ Ս. Էջմիածինէն առաջնորդանիստ Ս. Սարգիս եկեղեցի կը բերուին Ս. Սարգիս Չօրավարին մատուցները: Ամբողջ օրուան ընթացքին մարդիկ առիթը կ'ունենան տեսելու սուրբին մատուցները եւ հայցել անոր բարեխօսութիւնը: Սարաջցիները մեծ կարեւորութիւն կու տային Ս.Սարգիսի տօնին եւ այդ շաբաթ 3-5 օր պահք կը պահէին: Ծովի ժամանակ արգիլուած էր օգտագործել կենդանական ծագում ունեցող մթերք, փոխինդ, ցորեն եւ այլուրէ պատրաստուած ուտելիքներ:

Ծովին երրորդ օրը մասնակիցները Չորեքշաբթի առտու եկեղեցի կ'երթային «խաչմեր» (օրհնուած ջուր) խմելով կ'աւարտէին պահքը: Այնուհետեւ տուն վերադառնալով՝ «ալլա հոց» կոչուող հացը (առանց աղի եւ թթիւմորի հաց) կ'ուտէին կամ «փեխանդը»: Վերջինս կը պատրաստուէր բոված այլուր եւ խաղողի ռուպէ (խաղողահիւթէ պատրաստուած քաղցու): Փոխինդը ընդունուած էր եփել մեծ քանակութեամբ եւ բաժնել դրացիներուն՝ Ս. Սարգիսի բարեգթութեան խնորանքով:

Սուրբ Սարգիսի տօնին կը յաջորդէ Բարեկենդանը, ապա՝ քառասօրեայ մեծ պահքը:

### **Ս. Սարգիսին աղօթքը**

Ր՛կ Տէր, Զրիստոս Աստուած իմ,  
անոնք, որոնք կը յիշեն իմ անունս  
իրենց նեղութեան մէջ եւ կը կատարեն  
իմ նահատակութեանս յիշատակը  
ուխտով եւ Պատարագով,  
ինչ որ ուզեն Զեզմէ, յէ անոնց  
եւ շնորհէ անոնց խնդրանքը:  
Այն ատեն երկինքէն ձայն մը կու գայ  
եւ կ'ըսէ. Պիտի տամ քու խնդրածդ  
եւ պիտի կատարեմ աղաչանքդ.  
Իսկ դուն եկուր վայել բեգի համար  
պատրաստուած բարիքները:



**Blessing Day of Youth**

## **Remembrance Days**

Saturday, February 8, 2020

### **Feast of St. Sarkis the Warrior**

St. Sarkis enjoys special popularity among the Armenian faithful. The feast day is movable, occurring between January 11 and February 15, and follows the five-day abstinence for the Catechumens (Arachavorats), as established by St. Gregory the Enlightener. Although the

abstinence interval is not associated with the Feast of St. Sarkis, people often mistakenly call it the abstinence of St. Sarkis, or the St. Sarkis week of fasting. In families where there is the name Sarkis or Mardiros or Mardig, festivities are held with relatives and friends to congratulate the honoree

### **LIFE OF ST. SARKIS THE WARRIOR**

Sarkis the Warrior was Greek by birth, and a Roman citizen. Although for centuries he had been memorialized and his feast day celebrated, it was not until the 12th century that St. Nerses the Gracious made a thorough study of his life and wrote a biography. Commander Sarkis lived in the fourth century. He was appointed military commander of Cappadocia by Emperor Constantine of Rome (337). A later Caesar (361-363), Julian the Apostate, suddenly began an intense persecution of Christians, making every effort to restore the old pagan faith.

The Warrior was a devout and faithful Christian. He fled Cappadocia to Armenia with his son Mardiros. Then, fearing that his presence in the Armenian royal household might precipitate war between the Greeks and the Armenians, he moved on to Persia where he was gladly received by King Shapouh II (310-379). He was designated by the king as commander of the Persian forces at the Perso-Roman border.

Commander Sarkis claimed many military victories and left the Persian king much pleased. On the other hand, word of his preaching Christianity reached the Persian royal palace.

The devious King Shabouh II invited Commander Sarkis and his son Mardiros to take part in their great religious holiday. Though the Warrior had a premonition about the impending threat, he decided to attend anyway and there declare his true faith within the royal circle. The inevitable did occur. Warrior Sarkis refused to bow before the idols and the fire. Moreover, he spoke defamatory words about the Persian gods. The enraged magi seized his son Mardiros and killed him on the spot. Warrior Sarkis was sent away to a distant place to be beheaded. The order to do so was carried out.

Fourteen faithful of his soldiers who had embraced Christianity went to recover Sarkis' body and bury him honorably. But they too were arrested and put to death in the same manner. Unyielding faithful persevered stubbornly and succeeded in finding Warrior Sarkis' body, and sent it to Assyria.

This episode was justification to class Sarkis the Warrior, who was martyred for his faith, his son Mardiros, and the fourteen soldiers among the saints. During the fifth century, St. Mesrob Mashdots, in a meeting with Assyrians, obtained the remains of St. Sarkis and brought them to Armenia, storing them in a hamlet named Karb, in the region of Vasburagan.

In reverence and admiration for the Warrior, his son Mardiros, and the soldiers for their faith, the Armenian people have over the centuries built countless churches named in their memory. It is noteworthy that in churches named after St. Sarkis, and often in other churches, there may be a painting in which St. Sarkis is shown astride a white horse, with a spear piercing a dragon which symbolizes evil. Usually, below such paintings are trays provided where worshippers light candles to the saint seeking intercession.

Over the centuries, St. Sarkis has been the subject matter for our illuminators of miniatures who have tried artistically to portray, to the best of their abilities, the warrior's noble and brave character and strong faith. We also find gems in our literature dedicated to St. Sarkis. There are many cities with large Armenian populations having churches named after St. Sarkis. On the feast day of the saint, those churches hold glorious religious festivals and conduct the blessing of "madagh."

### **POPULAR TRADITIONS CONNECTED WITH THE FEAST OF ST. SARKIS**

According to popular tales, St. Sarkis the Warrior had rescued a girl. This traditional belief is the reason why young people have such a warm fondness for St. Sarkis the Warrior, believing that the Saint best understands them as young people and can therefore help them in the realization of their dreams. Based on that, young people, especially girls, maintain an agonizing fast for three or five days during the week preceding the feast day of the Saint. In

any case, abstinence is the rule for that week. Also, in earlier times, a wheat and flour meal was put on the corner of the roof where St. Sarkis would ride by on his horse. The next morning the members of the household would look to see the horseshoe imprints on the rooftop and they would gather up the meal and feed it to young people so they would attain their desires.

“On that feast day, using pure flour, they baked a very salty bun (Gata). Young men and maidens ate of those buns in the evening and went to bed for the night without drinking water. If in their dreams they gave or received water from the object of their love, that was a sign that their wishes would be realized. On Saturdays, in bringing their abstinence to a close, young men and girls placed their first bit of food on the rooftop and monitored it to see which morsel the crow, which does not usually leave the village in winter, takes, or in what direction it flies with the morsel of food. These would-be indications of which girls would become life mates.”



**ԱՆՈՒՍՆԱՍԿՈՉՈՒԹԻՒՆ Ի ՅԻՇՄԱՍԿ**

**Ս. Սարգիս Զօրավարի**

**Ս. Սարգիս Զօրավարի յիշատակութեան առիթով  
կը շնորհատրենք բոլոր**

**Սարգիս, Սերճիօ, Սերժ, Սագօ, Մարտիրոս եւ Մարտիկ  
անունները կրողներուն անուանակոչութիւնը:**

**FEAST OF THE NAME DAY**

**OF ST. SAINT SARKIS THE WARRIOR**

**On the feast of remembrance of St. Sarkis the Warrior,  
we congratulate all the individuals who are named  
Sarkis, Sergio, Serj, Sako, Mardiros, & Mardig.**



## ՇԱԲԹՈՒՄԱՆ ԱՂՕԹՔ

### ԱՊԱՇԽԱՐՈՒԹԵԱՆ ՍԱՂՍՈՍ (ՇԱՐՈՒՆԱԿԵԼԻ)

Ողորմէ՛ ինձի, ո՛վ Աստուած, քու  
Ողորմութեանդ համեմատ,  
քու առատ գթութեանդ համեմատ  
ջնջէ իմ յանցանքներս:  
Իմ անօրէնութենէս բոլորովին  
զիս լուայ ու իմ մեղքէս զիս սրբէ:  
Վասնզի ես կը ճանչնամ իմ յանցանքներս  
ու իմ միտքս միշտ իմ առջեւ է:  
Զեզի՛ միայն քեզի դէմ մեղանչեցի  
եւ քու աչքերուդ առջեւ չարութիւն ըրի,  
Որպէսզի արդար ըլլաս խօսքերուդ մէջ  
ու անարատ ըլլաս դատաստանիդ մէջ:  
Ահա ես անօրէնութիւնով ծնայ  
ու իմ մայրս մեղքով յղացաւ զիս:  
Ահա դուն ճշմարտութիւն կ'ուզես  
երիկամունքներու մէջ. ու ծածուկ տեղը  
իմաստութիւնդ պիտի յայտնես ինձի:

### PSAUME DE PÉNITENCE (À SUIVRE)

O Dieu! aie pitié de moi dans ta bonté;  
Selon ta grande miséricorde,  
efface mes transgressions;  
Lave-moi complètement de mon iniquité,  
Et purifie-moi de mon péché.  
Car je reconnais mes transgressions,  
Et mon péché est constamment devant moi.  
J'ai péché contre toi seul,  
Et j'ai fait ce qui est mal à tes yeux,  
En sorte que tu seras juste dans ta sentence,  
Sans reproche dans ton jugement.  
Voici, je suis né dans l'iniquité,  
Et ma mère m'a conçu dans le péché.  
Mais tu veux que la vérité  
soit au fond du cœur :  
Fais donc pénétrer la sagesse  
au dedans de moi!

## Շաբթուայ խորհրդածութիւններ

- Խօսք տուած ես, կատարէ: Աւելի լաւ է չխոստանալ, քան խոստանալ եւ չկատարել:  
Սողոմոն Իմաստուն
- Համբերատար մարդը աւելի ուժեղ է, քան խիզախը: Իսկ ինքնատիրապետող մարդը աւելի հզոր է, քան քաղաքին տիրացողը:  
Սողոմոն Իմաստուն
- «Մարդիկ հաւասար կը ծնին, անհաւասար կ'ապրին, հաւասար ալ կը մեռնին»:  
Խրիմեան Հայրիկ
- «Մարդու ազնուութեան ամենափայլուն փաստը անոր մեծահոգութիւնն է եւ ոչ թէ՛ ունեցած հարստութիւնը»:  
Խրիմեան Հայրիկ

### ՏՆՕՐՀՆԷՔԻ ԱՄԷՆԴՈՅԹՆ ՌԻ ՍՈՎՈՐՈՅԹԸ

Տնօրինէք փափաքող հաւատացեալները կրնան հեռաձայնել  
Տ. Դաւիթ Քիւյ. Մարգարեանին՝ (514) 448-2809  
կամ Եկեղեցւոյ գրասենեակ՝ (514) 279-3066

#### The Tradition of Home Blessing

The home is blessed for dedication or rededication, a reminder that the home reflects the Kingdom of God. Traditional times of the year for Armenian homes to be blessed are Eastertide (the 50 days following Easter), Christmastide (until February 14, the Feast of the Presentation), and after having moved into a new home.

At a Home Blessing, every member of the family assembles with the priest to sanctify together three life-giving gifts: bread, water, and salt. It is a custom for the priest to bring with him a nushkhar as a symbol of the presence of God's blessing.

To request a Home Blessing,  
please contact with  
Fr. David Margaryan at (514) 448- 2809  
or church office at (514) 279-3066.

### ԱՌ Ի ԳԻՏՈՒԹԻՒՆ ՀՈԳԵՀԱՆԳԱՏԵԱՆ ՊԱՇՏՈՆԻ

Մեր սիրելի հաւատացեալներուն կը տեղեկացնենք, որ  
Հոգեհանգստեան Պաշտօն ինդրելու համար Եկեղեցի  
հեռաձայնել պահանջուած հոգեհանգիստի թուականէն մէկ  
շաբաթ առաջ

մինչեւ այդ շաբթուայ **Հինգշաբթի կ.ե. Ժամը 5-ը:**

Ե-Հասցեով (e-mail) ինդրուող հոգեհանգստեան պաշտօն կամ որեւէ այլ  
ինտրանէթ պէտք **է հաստատուիլ եւ վերստուգուիլ** քարտուղարութեան հետ  
**հեռաձայնելով Եկեղեցւոյ գրասենեակ՝ (514) 279-3066 թիւին:**

Շնորհակալութիւն  
Եկեղեցւոյ գրասենեակ

**ՀՈԳԵՀԱՆԳՍՏԵԱՆ ԿԱՐԳ**

**SERVICE POUR LE  
REPOS DE L'ÂME**



**SERVICE FOR THE  
REPOSE OF SOUL**

**ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ  
ԿԻՐԱԿԻ, 9 ՓԵՏՐՈՒԱՐ 2020  
REQUIEM  
DIMANCHE, LE 9 FEVRIER 2020**



Տ. եւ Տիկ. Առաքել Սուվալեան  
եւ զաւակներուն (Քաթար),  
Տ. եւ Տիկ. Վրէժ Սուվալեան եւ զաւակներուն,  
Տիկ. Արփիկ Սուվալեան Սեւոնաուիի  
եւ զաւակներուն,  
Տ. եւ Տիկ. Ռաֆֆի Սուվալեան եւ զաւակներուն,  
Տ. եւ Տիկ. Զաւէն Սուվալեան եւ զաւակներուն,  
Տ. եւ Տիկ. Վարդան եւ Անյա Սուվալեանի,  
Տ. եւ Տիկ. Ճիւմբի եւ Թալին Աթիլէի,  
Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն պիտի  
կատարուի իրենց սիրեցեալ մօր, մեծ մօր  
եւ հարազատի՝

**ԺԱՆԷԹ**

**ԽՈՒՐԻ-ՍՈՒՎԱԼԵԱՆԻ**

**(JEANNETTE KHOURI-SOUVALIAN)**

Մահուան 40-ին առիթով

(Հիւրասիրութիւն «Վաչէ Յովսէփեան» սրահին մէջ):



Օրդ. Լիլիան Քիւպելեանի,  
Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն  
պիտի կատարուի իր սիրեցեալ հօր՝

**ՊԵՐՃ ՔԻՒՓԷԼԵԱՆԻ**

**(BERDJ KUPELIAN)**

Մահուան 40-ին առիթով





Տիար Խաչիկ Գրիգորեանի,  
Տ. եւ Տիկ. Ռաֆֆի եւ Սիրան Շիրիլեանի  
եւ զաւակներուն եւ թոռներուն,  
Տ. եւ Տիկ. Մհեր եւ Շողիկ Թէնքերեանի եւ զաւակներուն,  
Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն  
պիտի կատարուի իրենց սիրեցեալ կնոջ, մօր եւ մեծ մօր՝

**ԱԼԻՍ**

**ԳԱԼՈՒՍՏԵԱՆ ԳՐԻԳՈՐԵԱՆԻ**  
**(ALICE KALOUSDIAN KRİKORIAN)**  
Մահուան 4-րդ տարելիցին առիթով:



Պրն. Վարդան Պապոյեանի եւ ընտանիքին,  
Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն  
պիտի կատարուի իրենց սիրեցեալ հարազատին՝

**ՀԱՄԲԱՐՉՈՒՄ ԱՄԻՐԵԱՆԻ**  
**(HAMPARTZOOM AMIRIAN)**

Հոգւոյն ի հանգիստ:



## **FOR THE RECENTLY DECEASED**

In your hands, O Lord,  
we humbly entrust  
our brothers and sisters.  
In this life you embraced them  
with your tender love;  
deliver them now from every evil  
and bid them eternal rest.



The old order has passed away:  
welcome them into paradise,  
where there will be no sorrow,  
no weeping or pain,  
but fullness of peace and joy  
with your Son and the Holy Spirit  
forever and ever.

**Amen.**

NURSE RAFF

# ՆՈՒԲԱՏՈՒՌԹԻՒՆ ԵՎԵՂԵՑԻՈՅ

DON  
À L'ÉGLISE



DONATION  
FOR THE CHURCH

## CHURCH:

Mr. & Mrs. Avedis Djihanian \$150,  
Mr. & Mrs. Murat & Zivart Takvorian,  
Mr. Manvel Markosyam, Mr. & Mrs. Jirayr & Anahid Dolar \$100.

## HOKEHANKISD:

### THE LATE BABOYAN FAMILY:

Anonymous \$40.

### THE LATE FRIK KALINIAN:

Mr. Frederick Kalinian \$150.

### THE LATE CHAKE NERDJIVANIAN:

Mr. & Mrs. Hratch & Salpi Nerdjivanian \$350.

### THE LATE SARO ARMEN MANOUKIAN:

Mr. Arto Manoukian \$150, Mrs. Anoush Keopruilian,  
Mr. & Mrs. Avedis Djihanian \$25.

### YOUGHAKIN TZNOUNT (CHRISTMAS):

Mr. Msnuel Mardirossian \$100, Mrs. Rosine Zeitounian \$60,  
Mr. & Mrs. Romik Avetisian \$50.

## 2 ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐՈՒՆ 9:10-15

Ամեն բանի մեջ հարստացած էք ամեն տեսակ առատաձեռնությամբ, ինչ որ մեր միջոցով շնորհակալություն կը գոյացնէ Աստուծոյ հանդէպ. որովհետեւ այս պաշտօնին սպասարկումը ո՛չ միայն կը լրացնէ սուրբերուն պակասը, այլ նաեւ կը ճոխանայ շատ շնորհակալութիւններով՝ ուղղուած Աստուծոյ: Այս սպասարկութեան փորձառութեամբ անոնք պիտի փառաւորեն Աստուած՝ Զրիստոսի աւետարանին ձեր դաւանած ենթարկումին համար, նաեւ ձեր առատաձեռն հաղորդակցութեան համար՝ անոնց եւ բոլորին հետ. ու պիտի աղերսեն ձեզի համար, կարօտնալով ձեզ Աստուծոյ գերազանց շնորհքին համար՝ որ ձեր մէջ է: Շնորհակալութիւն Աստուծոյ՝ իր անպատմելի պարգեւին համար:

## 2 Corinthians 9:10-15

You will be enriched in every way so that you can be **generous** on every occasion, and through us your **generosity** will result in thanksgiving to **God**. ... And in their prayers for you their hearts will go out to you, because of the surpassing grace **God** has given you.



# Ս. Գրիգոր Լուսավորիչ Առաջնորդանիստ Մայր Տաճար

## ՏԵԱՌՆԴԱՌԱՉ

Տօն Քրիստոսի քառասնօրեայ Տաճար գալստեան

## ՆԱԽԱՏՕՆԱԿ

Հանդիսաւոր ժամերգութիւն եւ  
Նախատօնակ

Նորապսակներու  
եւ Նոր Նշանուածներու  
Օրհնութիւն

Հինգշաբթի՝ 13 Փետրուար 2020  
Երեկոյեան ժամը 7-ին:



Յաւարտ արարողութեան  
հիւրասիրութիւն  
«Վաչէ Յովսէփեան» սրահին մէջ:

Սիրով կը հրաւիրենք  
հաւատացեալ մեր ժողովուրդը

եւ մասնաւորաբար  
Նորապսակներն ու Նոր  
Նշանուածները

Հաղորդակից դառնալու օրուայ խորհուրդին եւ օրհնութիւն ստանալու:

615 Stuart Ave., Outremont, QC H2V 3H2  
Tel.: (514) 279-3066 / Fax: (514) 279-8008  
[stgregorychurch@gmail.com](mailto:stgregorychurch@gmail.com)



Ս. Գրիգոր Լուսավորիչ  
Առաջնորդանիստ Մայր Տաճար  
**ՏՕՆ ՍՐԲՈՑ ՎԱՐԴԱՆԱՆՑ ՉՕՐԱՎԱՐԱՅՆ**

*Սկառևտներու Օրհնութեան Օր*



*Օրհնութեան Կարգ եւ Տօնակատարութիւն*

Նախագահութեամբ՝ Թեմիս Բարեջան Առաջնորդ  
Գերշ. Տ. Արգար Եպս. Յովակիմեանի

Պատարագիչ՝  
Արժ. Տ. Դաւիթ Քինյ. Մարգարեան  
Հոգեւոր Հովիւ

Հինգշաբթի, 20 Փետրուար 2020, երեկոյեան ժամը 6:30-ին:  
Յաւարտ Օրհնութեան Կարգի գեղարուեստական յայտագիր եւ  
հիւրասիրութիւն «Մարի Մանուկեան» սրահին մէջ:

Մասնակցութեամբ՝  
Կիրակնօրեայ Վարժարանի աշակերտներուն

Սիրով կը հրաւիրենք հաւատացեալ ժողովուրդը միասնաբար  
ոգեկոչելու Սրբոց Վարդանանց Նահատակներու յիշատակն ու աւանդոյթը:

615 Stuart Ave., Outremont, QC H2V 3H2 Tel.: (514) 279-3066 / Fax: (514) 279-8008  
[stgregorychurch@gmail.com](mailto:stgregorychurch@gmail.com)



**ՕՐՅՆՈՒԹԵԱՄՔ՝**  
**Գերշ. Տ. Աբգար Եպս. Յովակիմեանի**  
**Բարեան Առաջնորդ Գանատահայոց Թեմի**  
**ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՄՔ՝**  
**Եկեղեցւոյ ACYOC «ԿԱՄԱՐ» Երիտասարդական Միութեան**

♥ **Ս. ՍԱՐԳԻՍ** ♥  
**ԶՕՐԱԿԱՐ**



♥ ♥ ♥  
**Երիտասարդներու**

♥ ♥ ♥  
**Օրհնութիւն**  
**Մասնակցութեամբ՝**

♥ ♥ ♥  
**«Կոմիտաս» Երգչախումբին**

♥ ♥ ♥  
**Կատակերգութիւն**

**Եւ պար**

♥ ♥ ♥  
**Զերմ մթնոլորտ DJ**  
**Էմիլի հետ**

♥ ♥ ♥  
**Հիւրասիրութիւն**  
**Վիճակահանութիւն**



**ԵՐԻՏԱՍԱՐՆԵՐՈՒ**  
**ՕՐՅՆՈՒԹԵԱՆ ՕՐ**

**Շաբաթ, 22 Փետրուար 2020,**  
**ժամը 18:30-ին, «Մարի**  
**Մանուկեան» սրահին մէջ:**

**Տոմսերու համար հեռաձայնել**  
**Հայկին՝ (514) 619-7098**  
**Կամ**  
**Եկեղեցւոյ գրասենեակ՝**  
**(514) 279-3066**



**Մուտքի սակ՝ \$25**

**Երեխաներու (5-12)**  
**սակ՝ \$15**



## ՀՍԿՈՒՄԻ ՀՈԳԵՊԱՐԱՐ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

Ամեն Չորեքշաբթի երեկոյեան ժամը 7:00-ին

**Փետրուար 26 – Ապրիլ 9, 2020**

**Փետրուար 26 – Քարոզիչ՝**

**Արժ. Տ. Դաւիթ Քհնյ. Մարգարեան**

*Պահոց Ընթրիք – Փառանձեմ Գեորգեան, Լիլիթ Մարտիրոսեան,  
Շողիկ Գրիգորեան եւ Թամար Սաղըրեան:*

**Մարտ 4 – Քարոզիչ՝**

**Արժ. Տ. Գեորգ Քհնյ. Աբեան**

*Պահոց Ընթրիք – Թէքեան Սշակութային Միութիւն*

**Մարտ 11 – Քարոզիչ՝**

**Արժ. Տ. Դաւիթ Քհնյ. Մարգարեան**

*Պահոց Ընթրիք – Տիկ. Թալին Թանաշեան*

**Մարտ 18 – Քարոզիչ՝**

**Գերշ. Տ. Աբգար Եպս. Յովակիմեան**

**Առաջնորդ Գանատահայոց Թեմի**

*Պահոց Ընթրիք –*

*Տ. եւ Տիկ. Ասպետ եւ Միրնա Պաճաքեան*

**Մարտ 25 – Քարոզիչ՝**

**Գերշ. Հ. Գեորգ Ծ. Վրդ. Չապարեան**

*Պահոց Ընթրիք –*

*Տիկ. Սօնիա Գալայճեան եւ Սօսի Նագազեան*

**Ապրիլ 1– Քարոզիչ՝**

**Պատուելի Յովհաննէս Սվաճեան**

*Պահոց Ընթրիք –*

*Տիկ. Թագուհի Օտապաշեան եւ Ընտանիք*

**Ապրիլ 9– Աւագ Հինգշաբթի**

**Քարոզիչ՝ Արժ. Տ. Դաւիթ Քհնյ. Մարգարեան**

*Պահոց Ընթրիք – Տիկնանց Յանձնախումբ*

*«Մարի Սանուկեան» սրահին մէջ*

615 Stuart Avenue, Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066/ Fax: (514)279-8008

📧 [stgregorychurch@gmail.com](mailto:stgregorychurch@gmail.com) 📱 Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal

🌐 [www.saintgregory.ca](http://www.saintgregory.ca)



**ՀԱՅՑ. ԱՌԱՔ. ՍԲ. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԻՈՐԻՉ**  
**ST. GREGORY THE ILLUMINATOR ARMENIAN**  
**ԿԻՐԱԿԱՍՏԻՑ ԺԱՍԵՐԳՈՒԹԻՒՆ**



Միրով կը յայտնենք, թէ  
Շաբաթ, 29 Փետրուար 2020-ի  
երեկոյեան ժամը՝ 5-ին, երեկոյեան  
(Կիրակամտից) ժամերգութիւն պիտի  
կատարուի Մոնթրէալի Սբ. Գրիգոր  
Լուսաւորիչ Առաջնորդանիստ Մայր Եկեղեցոյ  
մէջ:

Այսու կը հրաւիրենք մեր հաւատացեալները  
ներկայ գտնուելու հոգեպարար այս  
արարողութեան:

*Օրհնութեամբ՝*  
*Տ. Դաւիթ Քինյ. Մարգարեան*



Յարգելի՛ ծնողներ, կը տեղեկացնենք, որ սոյն տարուայ սկսած Սեպտեմբեր ամիսէն նոր որակով եւ ընդայնուած ծրագիրով կը վերամեկնարկէ Մոնթրէալի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Առաջնորդանիստ Մայր Տաճարի կիրակնօրեայ վարժարանը իր 2019-2020 ուսումնական տարին:

Կիրակնօրեայ վարժարանը նոր ուսումնական տարեշրջանին կ'առաջարկէ հետեւեալ դասընթացքները.

1. Հայոց պատմութիւն եւ հոգեւոր գիտելիքներ \_\_\_\_\_
2. Մանկապատանեկան երգչախումբ
3. Շախմատ (ճատրակ)
4. Նկարչութիւն
5. Հայոց լեզու
6. Խօսքի մշակոյթ (թատրոն, ասմունք):
7. Դաշնակի Դասընթացք – (Մանրամասնութեան համար հեռաձայնել \_\_\_\_\_ Վարժարանի պատասխանատուներուն՝ Հայկին եւ Ալինային):

Կը խնդրենք ընդունիլ առ ի գիտութիւն, որ կատարուած են որոշակի փոփոխութիւններ Կիրակնօրեայ Վարժարանի դասընթացքներու կազմակերպման ընթացքին մէջ.

- դասընթացքները պիտի սկսին ժամը 10:30-ին եւ կ'աւարտին՝ ժամը 14:00-ին, որոնց ընթացքին տեղի կ'ունենայ հիւրասիրութիւն:
- դասընթացքներու համար կ'ակնկալուի ձեր խորհրդանշական մասնակցութիւնը՝ 1 փոքրիկի պարագային ամիսը \$15, երկուքի պարագային՝ \$25, իսկ երեքի պարագային՝ \$33:

Միաժամանակ կը տեղեկացնենք, որ ներկայիս կը քննարկուի նաև փոխադրամիջոցի ապահովման հարցը (լրացուցիչ վճարման դիմաց):

Ձեր բոլոր առաջարկները կրնաք ներկայացնել Կիրակնօրեայ Վարժարանի պատասխանատուներուն անձամբ կամ հետեւեալ Ե-հասցէներով (e-mail)՝

[haykpetrosyan80@gmail.com](mailto:haykpetrosyan80@gmail.com) կամ [alinabezhanyan1@yahoo.com](mailto:alinabezhanyan1@yahoo.com):

**Փոքրերու արձանագրութեան համար հեռաձայնել՝**

**Ալինա (438) 889-8167 Հայկ (514) 619-7098**



615 Stuart Avenue, Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066 / Fax: (514) 279-8008 / [stgregorychurch@gmail.com](mailto:stgregorychurch@gmail.com)  
Facebook: Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal